# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 սեպտեմբերի 2018 թվականի N 89 _Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆԻՆ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 10-րդ մասերով՝ զանգվածային լրատվամիջոցների և հանրության հետ կապերի ոլորտում աշխատանքների արդյունավետ կազմակերպման և համակարգման նպատակով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. ՀՀ Սյունիքի մարզպետի օգնական Արմինե Ավագյանին վերապահել՝
   1) տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի ոլորտում մարզպետի լիազորությունների իրականացման աջակցման գործառույթները,
   2) մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումներից և ենթակայության կազմակերպություններից ոլորտում իրականացվող աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ստացումը, վերլուծությունը և համապատասխան փաստաթղթերի նախապատրաստումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Կ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2018թ. սեպտեմբերի 11
ք. Կապան